



## Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐ

Ս. Սարգիս Զօրավար հայոց ամենն սիրուած սուրբերէն մէկն է:

Ըստ աւանդութեան, Ս. Սարգիս Բիւզանդիոնի Մեծն Կոստանդիանոս կայսեր կողմէ կը նշանակուի սպարապետ՝ Հայաստանի սահմանակից Կապադովկիա շրջանը: Ան կը քանդէ հեթանոսական մեհեանները եւ կը կառուցէ եկեղեցիներ, տարածելով քրիստոնէութիւնը:

Պարսիկ զօրավարներէն շատեր, տեսնելով Ս. Սարգիսի գործած հրաշքերը, հեթանոսութենէ կը հրաժարին եւ քրիստոնէայ կը դառնան: Սակայն Պարսկաստանի Շապուի թագաւորը իր մօտ կը կանչէ Ս. Սարգիսը եւ կը պահանջէ կրակը պաշտել:

Զօրավարը կը մերժէ եւ թագաւորին դիմաց կը կործանէ կրակին բագիւնը: Չայրացած կրակապաշտ ամբօխը կը յարձակի Ս. Սարգիսին եւ իր գաւակին վրայ: Տեղոյն վրայ կը նահատակուի գաւակը՝ Մարտիրոսը: Ս. Սարգիս կը բանտարկուի եւ անսասան մնալով իր հաւատքին մէջ՝ կը գլխատուի:

Նահատակուելէն ետք, Ս. Սարգիսի մարմինն վրայ լոյս կ'իջնէ:

Ս. Մեսրոպ Մաշտոց Ս. Սարգիսի մասունքները կը տեղափոխէ Կարբի գիւղ (Աշտարակի շրջանը), ուր կը կառուցուի սուրբին անունը կրող եկեղեցի:

Հետագային, Ս. Սարգիսի տօնը կը ճանչցուի որպէս երիտասարդներու օրհնութեան օր:

Ս. Սարգիսի տօնը մեծ ժողովրդականութիւն ունի հայ ժողովուրդին մօտ, յատկապէս՝ երիտասարդներուն:



ԹԻՒ ԴԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ  
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ՔՇՈՒՇԵԱՆ






Գունաւորէ՛ Ս. Սարգիս զօրավարին պատկերը:



Ամբողջացո՛ւր: Ռ՞, թէ Ր՞:


- \_ումբ
- ձէ\_նա\_ումբ
- ձէ\_ք
- գ\_իջ
- գ\_չատուփ
- գի\_ք
- ս\_բիջ
- գ\_ատախտակ



իտսոյտտմն 'Յվճսո 'ճսվն 'փստոմՅմն  
'Յվմն 'ճնչգ 'ժրստողսչգ 'ժրսս  
**:մչղղոյոյոտոս**



Կրնա՞ն օգնել փոքրիկ ասպետին ելքի ճամբան գտնելու, առանց հանդիպելու թշնամիներուն:





# ԱՂՈՒԵՍՆ ՈՒ ԱՅԾԻԿԸ

Օր մը աղուեքը ջրհորին մէջ կ'իյնայ: Ան ամէն կերպ կը փորձէ դուրս գալ ջրհորէն, սակայն՝ ապարդիւն:

Նոյն ժամանակ, ջրհորին մօտէն կ'անցնի ծարաւ այծիկ մը: Ան կը նայի ջրհորին մէջ եւ կը տեսնէ որ աղուեքը մէջը ին կ ա ծ է... զ ա ր մ ա ց ա ծ կը հարցնէ.

- Ի՞նչ կ'ընես այստեղ, պարո՛ն աղուեք:

- Այս ջրհորին ջուրը ամենէն լաւն է ամբողջ աշխարհի վրայ: Եկո՛ւր, դուն ալ ներս ցատկէ՛ եւ փորձէ՛ այս ջուրէն խմել, - կ'ըսէ խորամանկ աղուեքը:

Վայրկեան մ'իսկ չմտածելով, այծը կը մտնէ ջրհորին մէջ, կը խմէ, կը կշտացնէ ծարաւը, ապա՝ կը նայի շուրջը... Վա՛յ, կը տեսնէ որ ինքն ալ աղուեքին պէս անօգնական մնաց ջրհորին մէջ:

Աղուեքը կ'ըսէ.



- Ես միտք մը ունիմ: Դուն ետեւի երկու ոտքերուդ վրայ կը կենաս, իսկ ես կռնակիդ վրայ կը բարձրանամ, յետոյ՝ գլխուդ եւ այդպիսով դուրս կ'ելլեմ ջրհորէն: Ետքը ես ալ կ'օգնեմ քեզի այստեղէն դուրս ելլելու:

Այծը անգամ մը եւս առանց մտածելու կ'ընէ այն, ինչ որ աղուեքը կ'ըսէ իրեն:

Աղուեքը կը բարձրանայ այծին կռնակը, հագիւ կը յաջողի դուրս ելլել ջրհորէն կը փախչի ու կը հեռանայ ծիծաղելով.

- Եթէ այնքան խելք ունենայիր, որքան որ մօրուք ունիս, աւելի զգոյշ կ'ըլլայիր եւ հաւանաբար ցատկելէն առաջ կը մտածէիր, թէ կարելի՞ է այդտեղէն դարձեալ դուրս ելլել...





## ՃՈՔՈՆՏԱ ԿԱՄ ՄՈՆԱԼԻԶԱ

Ճոքոնտան կամ Մոնալիզան Լիոնարդո Տա Վինչիի այն նշանաւոր գծագրութիւնն է, որ կը ցուցադրուի «Լուվր» թանգարանին մէջ, Փարիզ:

Տասներկու տարի ցուցադրուելէն ետք թանգարանէն գողցուեցաւ եւ ետ վերադարձուեցաւ, բայց տարբերութիւնը այցելողներուն թիւն էր որ բազմացաւ՝ տեսնելու գծագրութեան ցուցադրուած տեղը:

Մոնալիզայի դեմքին առեղծուածային արտայայտութիւնը հրապուրած է միլիոնաւոր մարդիկ: Իսկ անոր ետեւ երեւցող պատկերը աւելի եւս խորհրդաւորութիւն կը ներշնչէ ամբողջ նկարին. կը կարծուի, թէ ան երեւակայութեան արդիւնք է, եւ ոչ իսկական վայր: Չայն Ֆրանսայի թագաւոր Ֆրանսուա Ա.-ը ձեռք բերած է եւ ներկայիս կը հանդիսանայ Ֆրանսայի սեփականութիւնը: